

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ,
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 12:00-ին Թալինի համայնքապետարանում (հասցեն՝
թ. Թալին, Գայի փ. 1, 3-րդ հարկ) անցկացնել մրցույթ, համայնքի սեփականություն
հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու
համար:

Մրցույթի առարկա է հանդիսանում՝

Լոտ 1. Թալին համայնքի Վ. Սասնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող
02-104-0122-0105 ծածկագրով 0,204 հա մակերեսով հողամասը, նպատակային
նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր,
տրամադրվում է նպատակային օգտագործելու համար: Մրցույթի առարկա հանդիսացող
հողամասը տրամադրվում է 5 տարի ժամկետով, հողամասի մեկնարկային գինը 1 հա-ի
համար կազմում է 12000 ՀՀ դրամ, ընդամենը՝ տարեկան 2450 ՀՀ դրամ: Մրցույթի
նախավճարի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով՝ 123 ՀՀ դրամ, իսկ
մրցույթային քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով՝ 123 ՀՀ դրամ:
Մրցույթի նախավճարը պետք է վճարվի մրցույթի անցկացման օրը՝ մրցույթը սկսելուց 30
րոպե առաջ: Հողամասից ոչ հեռու առկա է ճանապարհ, հողամասը գտնվում է ՀՀ հողային
օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ ըստ առանձին լոտերի,
մասնակցության վճարի անդորագիր (որի չափը սահմանված է 5000 ՀՀ դրամ) և անձնագիր:
Հայտերն ընդունվում են երկուշաբթիից-ուրբաթ ժամը 10:00-17:00-ն, ընդմիջում՝ 13:00-14:00-ն:

Մրցույթի մասնակցության հայտը չի ընդունվում, եթե ներկայացնողը ՀՀ հողային
օրենսգրքով սահմանված հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտ չէ:

Սակարկողը կարող է գինն ավելացնել մրցույթային քայլի չափից ոչ պակաս գումարով:

Եթե մասնակիցը չի հաղթել, նախավճարը անմիջապես վերադարձվում է նրան, եթե հաղթել
է՝ նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ:

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է մրցույթի անցկացման
օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

Մրցույթն անցկացվում է բաց, որին մասնակցում են հանձնաժողովի անդամները, գրանցված
անձիք և մրցույթի մասնակից չհամարվող անձիք (դիտորդի կարգավիճակով):

Մրցույթի մասնակից չհամարվող անձիք մրցույթին ներկա գտնվելու համար, յուրաքանչյուր
լոտի համար առանձին ներկայացնում են սահմանված չափով (5000 ՀՀ դրամ) մուտքի վճարի
անդորագիր և անձնագիր:

Մրցույթն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է:

